



Ա Բ Ա Բ Ա Տ

Թիկ թ.՝ — Երջան ժ.՝ 1885 ՏԱՐԻ Ժ.՝ ՀՈԿՏԵՄԲՐԻ 31

ԳԵՐԱԳՈՅՆ ԲԱՐԻՆ:

Ե-Էպին. Մաս. 13. 14.

Մի ոսկու գանձ խոր թաղուած էր մի ազարակի մէջ ու մի մարդ նորա տեղը գտաւ. Նա, այդ գանձը գտնելու համար, առաւօտուանից՝ գեռ լոյսը բացուած չբացուած՝ մինչեւ իրիկունը՝ մասթը գետինն առնելն՝ աշխատումէր, և ոչ մի աշխատութիւն ու չարշարանք նորա աչքը չվախացրեց։ Այն ժամանակն ասաց գանձի պահապան ոգին, « փակուած կմնայ քո առաջդ գանձի գուռն, մինչեւ որ դու ունայն աշխարհիս ու կեանքիս բարիքը չծախես ու փրկանք քերես այդ գանձը ստանալու համար » :

Այն գանձն, որոյ համար Տէրն ասել է, ուրիշ ոսկեհաւոն ու ականակապ զարդի նման չէ։ Այդ գանձը գտնելու նա մեզ համար ճանապարհ է բաց արել մահովը։ Այս գանձին՝ Աստուծոյ արքայութիւն են ասում։ Այս գանձը դու երբէք չես գտնել, եթէ որ այդ յաւիտենական գանձը ստանալու համար չզոհես քո բոլոր բարիքեւ, որ քեզ կապումես աշխարհիս փշանալու, հող գաւնալու բանի հետ։

Ովաշխարհ, ինչպէս անկայուն, ինչողէս անցաւոր է ամենայն բան, որ մէջդ հիսրընկալումենս Ապառաժ սարն, որ մինչեւ ամպերն է բարձրացնում, հասցնում իւր գլուխը, կամաց կամաց կոտրտվումէ, փշրատվում ու փշանում ձիւնի ծիւերի նման, որ ընկնումեն գետնի վերայ ու հալի՛ում։ Հարստութեան գանձերն, որ բաղզն ու աշխատութիւնը միմեանց վերայ դիզում են, որպան երկար են արդեօք քնում։ Օրիորդի սիրո գրաւող գեղեցկութիւնից, պատահոյ աշխայժն ախորժելի տեսքից յափշտակվումես։ Բայց տարիներ անց կենալուց յետոյ, զուր ես պտում գու այդ միջոցում արդէն փոխուած, ընկած, ծերացած մարդու մէջը։ Թագաւորները պալատներ են շինում որ յաւիտեան մնան։ Բայց յաւիտենական բան կայ արդեօք աշխարհիս երեսին։ ամեն կողմից թափուած պատերը սպառնումեն քանդումն, ու փլատակներից գուրս է հանում իւր գլուխն անպտուղ բաղեղն՝ ամայութեան և աւերակների ընկերը։ Հին ժամանակուայ մեծ քաղաքների տեղն՝ այժմ տեսնումենք արդէն հարիւր տարիներով յառաջ, զուրս եկած վայրենի անտառներ։ Աւնայնամիտ մարդիկ երազումէին, որ այդ քաղաքներն էլ յաւիտեան մնալու համար են շինուած ու յաւիտեան կմնա՞ն։ Մի հզօր թագաւորի զօրութիւնը սասանեցնումէ աշխարհիս մի մասի բոլոր թագաւորութիւնը, կտոր կտոր է անում թագեր, բաժան բաժան է անում աղգեր, իւր կամքը նոր բաներ է ստեղծում, ու ինչ որ ինքը կամցաւ, իսկոյն պատրաստ է։ Ինչպէս մեծ ու նախանձելի մարդ է երեւում մեզ այդ կիսաստուածը։ Բայց մէկ էլ տեսնես, իւր մարմնոյ մի փոքրիկ մի բարակ թելը թուլացաւ, մի փոքրիկ արիւներակը կտրուեց, — ու այն անսասանելի մարդը գեղնեց ու ընկաւ գագաղ, ամենին նախանձելի կիսաստուածն արդէն պառկեց հողի տակ ու փաելու վերայ է։ Ամբազ աղդերի սպարսաւանքը՝ շատ անգամ՝ նզովքը՝ անվերջ թափումեն՝ երբեմն իրանց աստուածացրած՝ մեծ մարդու գերեզմանի վերայ՝ իւր մահուանից յետոյ։

Աւրեմն երկնքի տակն ոչ մի կայուն բան չկայ։ Ամեն, ամեն բան ուրեմն հանգամանքի խանդ է և ժամանակների աւանը։ Մարդոց ցնծութեան սրաերն ուրուս ձայներն կամաց կամաց օգումը ցնդումեն վշտի ու տիսրութեան մէջ մինակ նստած լայտի տաք արտասուքն էլ վերջապէս չորանումէ։ Կդայ այն օրն, որից ոչ ոք

շիփախցիլ, այն օրն, որ աղքատի ձեռքից խւր փայտը կլսլի, թուգաւորի գլխալցն՝ իւր թագը:

«Եւ եթէ ամենայն բան էլ կորչի անհետանայ, մառացուի՝ բայց պատմութեան թերթը պղնձի է, որի մէջ մարդու մեծ գործն որ գրուի, նորա անունն անմահ կմնայ աշխարհումն յետոյ աղբող մարդոց մոքի մէջ: Կենդանի մարդու համար էլ ոգեսորիչ է յետոյ ունենալու իւր մեծ անուան ու փառքի ձայնն»: Այսպէս են ասում շատերը: Բայց մարդուս իրանից յետոյ էլ ունենալու իւր մեծ անունն ու փառքը մի ունայն խարեւթիւն է միայն, որով իւր պատուասիրութիւնը շողսքորթումէ: Իւր մահից յետոյ մեծ անուն թողնողն արդէն վազուց իւր կեանքը վերջացրել է ու էլ չկայ աշխարհումն: Խսկ իրանից յետոյ աշխարհումն ապրողն չգիտէ թէ՝ մեծ անուն ստացել է արդեօք, տռաւել ևս չգիտէ, թէ ինչ կերպով է ստացել և ինչ տեսակ անուն է ունեցել: Ինչ պէս որ մարդիկը, քիչ է պատահում, որ իրանց լաւ անցկացրած օրերն այսպէս երկար ժամանակ մոքներումը պահեն, ինչպէս որ իրանց քաշած վատ օրերը չեն մոռանում, պատմութիւնն էլ, սովորաբար, ամենից աւելի յիշումէ միայն նորանց, որ իրանց անբաղտութեամբը մեծ մի անուն են համել: Մարդկային ազգի բարերարներն, որոց անունն օրհնելով են յիշում իրանցից յետոյ աշխարհումն ապրող մարդիկ, թուով շատ չեն: Բայց հարիւրաւոր պատուամոլ չարագործների մասին լաւ տեղեկութիւն ունինք: Բայց դորանք էլ կմուացուին: Ժամանակի հոսանքն, որ գորանց ամենքի վրայով անց է կենում, գնում, բարիներին էլ, չարերին էլ իւր յորձանքից բացած անդունդքի մէջ կիթաղի:

Դէ այսպէս ստուերի նման բաներ են կեանքի ամենամեծ բարիքն, որոց եաւից մահկանացու մարդս լինկնումէ՝ առանց աչքը կշռանալու: Դեղեցկութիւն, հարստութիւն, բարձր գիրք ու աստիճան, գիտնականութիւն, զօրութիւն ու մեծութիւն՝ բոլորն էլ անց կացող գնացող՝ աչքակապութեան նման բաներ են, երազներ են, ինչպէս որ հենց մեր կեանքն էլ է:

Եւ եթէ որ, ինչպէս ահա տեսնումենք, հարստութիւնն, որ այսօր կայ, վաղը՝ չկայ, ուրեմն փոշու պէս մի բան է, որ քամին տանումէ, եթէ որ զօրութիւնն, իշխանութիւնը մի ոչինչ բան է, գեղեցկութիւնը թառամումէ, փառքը նուազումէ մի ժամանակից յետոյ այնքան, որ էլ չէ յիշլում թէ՝ մեծ արժանաւորութեան

արձագանքը լինէր մի մեծագործ մարդու, և մեծութիւնն էլ մի զիակ է, մի անշնչացած մարմին, քանի որ այդ մեծութիւնն ունեցողն անշունչ զի սկ է դառնում մեռնելով. — եթէ որ այժմ ծաղկած վիճակի մէջ գտնուող թագաւորութիւններն, այժմ ապրող տղգերն աշխարհիս երեսից սրբվումեն ու անհետանում — էլ ի՞նչ է մնում այնտեղ, ուր որ ոչ մի բան չէ մնում. ի՞նչն է կանգուն մնում այնտեղ, ուր որ ամեն բան կործանվումէ: —

Այս ասաղն, որոյ մէջ ես մի կարծ ժամանակ բնակիլումեմ ու ապրում ու անունն երկրագունդ եմ ասում, զեռ ո՞քան ժամանակ պիտի ման գոյ արեգակի շուրջը, իւր կեղեւը չորանալուց առաջ, իւր մակերեւոյթը կիր դառնալուց առաջ, որ կենդանի էակների համար անբնակելի տեղ պիտի դառնայ այնուհետեւ: Արդեօք այն արեգակներն ու աստղերն էլ, որ տեսնումեմ երկրներումն իմ գլխիս վերայ, չպիտի փոփոխութեան տակ ընկնեն: Այս երկրագունդն, որոյ վերայ ման եմ գալիս, երկնքի այն լուսաւորներն, որ իմ գլխիս վերայ լոյս են տալիս, ի յաւիտենից չեն առաջ եկել, յաւիտենականութիւն էլ չունեն:

Սարսափելով՝ աչքերո սառած՝ մտիկ եմ տալիս այն գատարկութեան վերայ, որոյ ծայրը չէ երեւում և որոյ մէջն ոչ մի շարժում, ոչ մի ձայն՝ ծաղուտ, ոչ մի շունչ չկայ: Մի ժամանակ՝ առաջ ծաղկած գրութեան մէջ եղած աշխարհիս, ամեն բանը փետացած զիակ կդառնայ, մի անսահման ու խաւար որատած ոչինչ կդառնայ, ինչպէս որ էր առաջ, քանի որ Սարարին այդ ոչինչից գրախտ չէր ստեղծել ու գոյացրել: Միայն աւեր, եղծումն, ապականութիւնն, չքութիւնն է բնակվում այն անծայր, անլերջ տիեզերքի մէջ, որ այժմ իմ ամեն կողմումն տեսնումեմ փայլուն, գեղեցիկ, գոյնզգոյն՝ իւր գրութեանը մէջ:

Բայց իմ հոգիս այս ապականութեան շփոթից, աշխարհիս այս անկարգ, խառն ու անկերպարան զրութիւնից վեր է բարձրանում յաղթանակ կանգնելով: Նա գիտէ, որ միայն եղծանելին պիտի եղծանի, աշխարհիս ամեն բաները փոփոխութիւնների տակ կընկնեն, բայց աստուածութիւնն անփոփոխ՝ յաւիտեան կմնայ. ուրիշ ամենայն արարածներն որ եղծուին էլ, աստուածայինը կմնայ:

Աստուածայինը ծածկած, անտեսանելի մի կենսական զօրութիւնն է հենց իմ մէջս էլ, և աստուածայինն է աստվածութիւնն:

որով հոգին ազնուանումէ: Առաքինութիւն ու յաւիտենականութիւնը միեւնոյն բանն են ինչպէս որ վոշին ու անցաւոր բանն էլ միեւնոյնն են:

Հաղարաւոր տարիներ են, որ մահկանացու մարդիկն այս բանը լաւ հասկացել են. Հաղարաւոր տարիներ են, որ մարդիկն այս մեծ ճշմարտութիւնն ասել են՝ թէ միայն աստուածայինն յաւիտեան կմնայ: Քրիստոս աշխարհք եկաւ. աշխարհիս մարդոց այս սորվեցրեց թէ՝ ով որ Աստուծոյ մէջն է, մշանցենաւոր Աստուածն էլ նորա մէջն է: Ու միլիոնաւոր մարդիկ նորան աղաղակեցին և նորա սուրբ անունն իբրև միակ զարդ իրանց վերայ առան. բայց իրանց ալօթքը սրտից չէր, իրանց աստուածպաշտութիւնն՝ ամենօրուայ արտաքին մի գործ էր, Քրիստոսին ընդունեցին նորան աշակերտը գարձան, բայց չճանաչեցին նորան. վատարանումէին նորա առաքինութիւնը, բայց իրանը առաքինութիւնից հեռու էին. աղաջում, պաղատումէին յաւիտենական եցնանկութեան արժանանալու համար, բայց իրանց մեղսական վայելչութիւնն ների ոչ մի ժամը նորան չգոհեցին: Յաւիտենական, աստուածային բանի վերայ մոտածումէին այն ժամանակ, երբ որ արդէն իրանց մահուան սարսափելի ժամը գալիս, համումէր, և երբ որ գերագոյն բարին, որոյ ետեւից ընկել էին այս կեանքումն՝ իրանց օրօրացից սկսած մինչեւ իրանց գերեզման մտնելու, արդէն անհետանումէր, ինչպէս որ անհետանումէր աշխարհիս ամեն բանն. բայց այս աշխարհիցո բաժանուելու բոլորում թափած արտասուքն ու մաքումը դրածներն իբրև հաստատ որոշումն, ինչ որ արդէն կորել է, նորա տեղը չեն բանել, ինչու որ արտասուքը՝ միայն արտասուք է, գեռ առաքինութիւն չէ. և մարդու՞ իւր մահուան վերջին ժամին մոքումն արած շատ ու շատ բարեպաշտական որոշումներն, որ իւր աչքը նոր բացուելուցն ու սարսափելով հասկանալուցն է անցկացրած աշխարհքից իւր սաստիկ կերպով խարուած լինելըն, մոքի բարեպաշտական որոշումներ են միայն, ոչ թէ աստուածային գործերով չանցկացրած մի կեանք:

Սուրբ գրքի հետեւեալ խոսքն՝ իբրև յորդորական մի սուրբ ձայն հնչումէ սրտիս մէջը թէ՝ «Եյս՝ աշխարհն է-ը վայելը-ին-նէնցն անց է կենուած. բայց ով ով Աստուծոյ կամդն է կոտացուած, նա յա-կապէտ ն ինայ» :

Ով դու վսեմ յայտնութեան միսիթարութիւն, որ իմ սրտիս

մէջ ձայն են տալիս աշխարհքիցո ու իմ խղճմտանքիցո, Քրիստոսի ու նորա աշակերտների կողմբց։ Քո հրաշալի զօրութիւնովդ թափանցիր իմ սրտիս խորեցը։

Երեւելի մահտրձաններն էլ մարդոց ամենամեծ գործերն էլ անցնումնն, բայց ես մնումեմ։ Երկրագունդն էլ մի օր կծերանայ, երկնքի լուսաւոր մարմիններն էլ մի օր, կարելի է, հանգչեն, բայց ես մնումեմ։ Ամէն բան պէտք է կորցնեմ, ամէն բան ինձանից պիտի դուրս գայ ինձ համար պիտի էլ լլինի, — միայն մի բան կարող եմ ինձ պահել, մի բան միայն ինձ կպահպանի, Աստուծոյ յառաջ եկած հոգուս անմահութիւն։

Ի՞նչպէս ես էլ երկար ժամանակ մնորուած ման էի գալի խաւարի մէջ։ Խնչու համար ես էլ պտռումէի իմ կեանքիս բաղտաւորութիւնն, իմ գերազոյն բարին՝ ուրիշ ամեն բանների մէջ, միայն այնուեղ չէ, ուր որ էր խկապէս ինչու համար խելք ու միոքս երբեմն երբեմն սասափիկ տալիս էի մեծ կարողութիւն ձեռք բերելու և աչքս չէր կշտանում ունեցածից։ Ես հօ գիտէ՛ի, որ հարստութիւնը մարդուս չէ բաղտաւորեցնում, ինչու որ ամենամեծ փառքի ու կարողութեան աէր մարդն էլ շատ անգամ կարող է ամենաողորմելի մահկանացուն լինել։ Ես հօ գիտէ՛ի, որ ակլոր եմ աշխարհք եկել, որ ոչինչ հետո տանելու չեմ՝ բացի այն կատարելութիւններից, որ իմ հոգիս ազնուացրել են։ Ես հօ գիտէ՛ի, որ էստոնք են այն գոնձերն, որ ես երկնքումը կարող եմ գանձել, ինչու համար այս գանձերը չէի հաւաքում։

Խնչու համար իմ ունայնասիրութիւնու շատ անգամ այնպիսի տպացամիտ կերպով ցանկանումէր ու փափագում արտաքին փառաւոր կեանքի՝ իրը թէ մարդուս գերազոյն բարին այդ էր միայն։ Ես հօ գիտէ՛ի, որ գեղեցկութիւնն մի բանի տարուան մէջ կորչելու բան է, և վայ է նորան, որ ոչ մի գին ունեցող՝ մնայուն բան ձեռք բերել խելքը չի կարել։ Հոգւոյ ազնուութիւնն մրայն յաւկունական փայլ ունի, և միայն կարող է տեղողութիւն ունենալ յաւխուեան անթառամ մնալ թարմ մանկական հասակով. տարիքն հոգւոյ այդ ազնուութիւնից ամեննեին մի բան էլ չէ կարողանում. եղծանել, ինչու որ յաւխունականը ժամանակաւորից բարձր է ու վսեմ, ինչպէս որ Աստուած ինքն։

Խնչու ես շատ անգամ սասափիկ կերպով ընկնումէի մեծ անունի ու փառքի ետեւից, որ մարդոց առաջ մեծ ու փառաւոր ոմն լի-

նիմ։ Խնչպէս կարողանումէի ես իմ ժամանակի մարդոց գովասահքն ցանկութիւններիս հասնելու իմ ամենամեծ նպատակը համարել։ Ո՞վ իմ պատուամոլութեան յիմարութիւն բնչպիսի կեղծիքներով ու երազներով էիր ինձ շատ անգամ խարում, խելքից համում, ու ինչպէս շատ անգամ մոռացնումէիր ինձ սրտիս հանգստութիւնն, որ կորցնաւմէի։ Ես հօ, լաւ գիտէք, որ հոգիս տուի թէ չէ, մարդոց շողոքորթութիւններից էլ ոչ մի բան իմ ականջս չիլսիլ։ Ես հօ ճանաչմէի մարդոց ան հաստատ ու փոփոխական խելքի տէր լինելն որպէս և նորանցից շատերի նախանձութութիւնն։ Խնչպէս կարողացայ ես այս երազական ցնորդներին ամենայն բան զօհել։ Միայն անմահ Աստուծոյ մէջն է անմահ փառքը, Միայն ամենագէտ Աստուծոյ մեր վերայ ունեցած միոքն ու արած որոշումն՝ մեր արժանաւորութեան մասին՝ հաստատ են ու անփոփոխ։ Արդեօք ես շատ ոյժ թափելով աշխատել եմ երբէք նորան հաճոյ լինելու, ինչպէս որ ամենայն կերպ աշխատել եմ փոփոխական խարուող, սխալական մարդոց հաճոյանալ։

Խնչու համար ես երկրաւոր ուրախութեանց բաժակը վայելելն այնպէս համարեցի, որ իբր թէ հոգուս գերազոյն բարին է։ Տես, հիմա ամէն բանն էլ փոխուեց, ուրիշ կերպ եղաւ։ Ընկերական կեանքի ամեն զուարճութիւններն, ամեն տօնակատարութիւններն, մեծահաց սեղաններն ու խնջոյքներն, որոց մէջ շատ ուրախութիւն աեսի ու արի, անց կացան, գնացին։ ուրախութեան երգերն, օդումը ցնդեցին, այդ քաշած վայելցութիւնների հետեւանքը զզման հառաջանքս է, որ սրտից է զուրս գալիս։ Հիւրերի ասել, խօսելը, վլվլոցն էլ չկայ. գերեզմանատան լոռութիւն է տիրում այն ուրախութիւններից յետոյ դատարկ դահլիճներումը։ Ծաղկեայ պսակով գլուխը զարգարած կաքաւող ծաղկահասակ օրիորդի մեռած գլխին դնելու այժմ՝ պսակ են հիւսում, և երբեմն այնչափ զուարթ, աշխայժ և ուժեղ պատանին՝ ծերութիւնիցը դողդողալով է ման գալի՛ փայտը ձեռին։ Աշխատնեն ամեն լոյելը-նիւնը անց կէնաց, բայց Աստուծոյ կամքը կապարուն յա-էտեան կնաց։

Եթէ ուզումես խմանալ թէ՝ ինչ է Աստուծոյ կամքը կատարելն, աչա ասեմ։ Աստուծոյ նման լինել՝ սրբութիւնով, կատարեալ լինել, ինչպէս մեր երկնաւոր հայրը կատարեալ է, մաքուր սիրո ու վարք ունենալ, ինչպէս Քրիստոս էր, մարդոց սիրել ու բազ-

տաւորեցնել, բաղաաւորեցնումէր իւր սիրուցն ինչպէս նա, մեր ամեն կաղմը սրտի գոհութիւն, ուրախութիւն և օրհնութիւն տարածել, ինչպէս նա անումէր, — ահա այս ասածներս անելն է Աստուծոյ կամքը կատարելն որոյ համար էլ աշխարհք ենք ծնած:

Ամեն բարիքներից գերագոյնն առաքինութիւնն է: Առաքինի կեանք վարելու համար Աստուած՝ մեր երկնաւոր հայրն իւր ամեն զաւակների համար ասպարէղ է բացել. այսաեղ թագաւորակն իշխանն՝ ամենաաղքատ խրճիթի բնակչից առաւելութիւն, կամ գերազանցութիւն չունի, ոչ էլ հարուստն աւելի ոյժ և իշխանութիւն քան թէ կարօտ մարդն, յաղթութեան պսակը ձեռք բերելու համար ամենքն էլ հաւասար ուժեր են սաացել: Դիտնականութիւնը՝ քանիքարաւոր մարդուն համար, գահը թագաւորի որդւոյ համար, լաւ անունն ունեւոր մարդու համար իրանց տրուած քանիքարներ են, որ պէտք է շահեցնեն. բայց մի բանն ամէն մէկին չիյարմարիլ. կեանքի մէջ բազմատեսակ վիճակներ ունեցող մարդիկ պէտք է լինին անշուշտ. շնորհքներն այլ և այլ կերպով պէտք է տրուած լինին, որ մէկը միւսին ծառայի. — բայց աստուածական այսինքն է գերագոյն բարին հասակախց է, ինչպէս որ Աստուած ամենեցուն Հոյրն է, ինչպէս որ մենք ամենքս էլ նորա զաւակներն ենք: Ամէն մարդ կարող է հասնել այդ բարոյն և դորա համար էլ մարդուս համար ամենամեծ ու ամենաթանկագին բանն է:

Իմացել ես արդեօք, թէ ինչն է հոգւոյ խաղաղութիւնն: Սրտի այն հանգստութիւնն, որ զգումես թէ՝ երկնքի ու երկրի հետ հաշտ ես ու ամենայն վտանգներից բարձր: Իմացել ես արդեօք սրտի այն երանելի անգորրութիւնն, որ զգումես միայն քո գերազանցութիւնով քո պարտքերդ արդէն կատարած լինելուդ և Աստուծոյ հաճոյ լինելուդ, և որ մահդ էլ, եթէ զար, քո որտիկ այդ անգորրութիւնը չէր կարող խանգարել: Այս էր քո անմեղութեանդ զօրութիւնն, այս էր քո մաքուր խղճմանքիդ վարձատրութիւնն — այս՝ գերագոյն բարեկանութեան կոյելու էր:

Բայց այն բաղաաւորութիւնն, որ սապոնի փրփուրի նման շուտ ոչնչանումէ, ամենալերջին ու գերագոյն բազգաւորութիւնը չէ կարող լինել: Մի ահագին հակասութիւն պիտի լինէր մեզանից դուրս՝ այսինքն աշխարհի և մեր ներսն, այսինքն մեր խղճմանքի մէջ: Մեր կարծիքի վերայ անջնջելի կերպով զբուած օրէնքը պիտի

յիմարութիւն լինէր և երկրաւոր բարիքի անցաւոր վայելքն՝ սկսած
ընդունուեր ամենացանկալի բանն, որ Աստուած մեզ համար իբր
թէ նպատակ է զրել, որ հասնենք: Բայց մարդոց ամէն փորձա-
ռութիւնն որպէս և շատ իմաստունների խմաստութիւնը այդ
մոքին հակառակ է: մինչեւ անգամ աշխարհիս բոլորովին փչացած
մարդն էլ վերջապէս հասկանումէ գողազով, որ ստեղծող Աստուած
կայ, որ մեզ առաքինութեան և ոչ թէ մոլութեան համար է
ստեղծել:

Միայն առաքինութիւնը կեանքի ամէն հանգամանաց մէջ մար-
դուս երջանիկ է անում, և երբէք չէ դադարում իւր խաղաղիկ
ուրախութիւններովը նորան վարձատրելու, պսակելու: Ամէն մի
վիճակի ու զրութեան մէջ մարդուս սրտի գոհութիւն է պարզե-
ւում, աղքատի սիրոր մեծ ուրախութիւնով է լցնում, այն աղ-
քատի, որոյ համար մի կտոր ցամաք հայն միայն իւր փառաւոր
ճաշն է, և որոյ համար մի ումնի ջուրն աւելի արժէ, քան մի բա-
ժակ գինին, որ խմիլումէ երկիւղից անհանգիստ սրտով ու հոգ-
սերով: Սորվեցնումէ արտաքին երեսոյթը ջոկել իրի խկութիւնից,
այնպէս որ մենք առաջուանից պատրաստուած ենք լինում ամէն
մի կորուստ ունենալու համար, մինչեւ անգամ այնպիսի բանի
կորուստն ունենալու, որ մեզ համար ամենաթանկագին է: Մի
անգամի, մի անիրաւի հայհոյից լեզուն կարող է մեր անունը
կոտրել: անարդարութիւնը կարող է մեզ մարդոց հաշուից գուրս
ձգել իրեւ անկարող, անպիտան, կամ անընդունակ: մի հիւան-
դութիւն կարող է մեզ բոլորովին անպէտք մարդ դարձնել, ան-
գամալոյն անելով՝ բայց ոչ մի բան չէ կարող Աստուած մեր սրտից
հանել, ոչ մի բան չէ կարող մեր անմեղութեան գիտակցութիւնը
մեր մէջը խեղդել, սպանել, ոչ մի բան չէ կարող պղտորելով մեր
սիրտն, այն միախարութիւնից մեզ զրկել, որով մեր ամենազառն
կորուստ ունեցած ժամանակն էլ մեր աչքն երկինք ենք քցում
ու առում, «Տէրը տուեց, Տէրն առաւ, օրհնուած լինի նորա
անունն»:

Աշխարհիս ամէն վայելչութիւնն անց կկենայ, բայց ով որ Աս-
տուծոյ կամքը կկատարի, նա կմնայ յաւիտեա՞ն: Այո՛ յաւիտե-
նական: Աստուծոյ նման յաւիտեա՞ն մնումէ առաքինութիւնը.
Նորանով աղնուացած հոգին կեանքի շփոթ խառնակութիւնից
վեր է սլանում, — ոչ մի բան չէ կարավանում նորան ազատել

նաւարեկութիւնից, երբ որ իւր հողային պատեանը վշուր փշուր է լինում, ոչ մի բան հետը չէ վեր առնում, այլ այն միայն, ինչ որ ինքն դարձել, եղել է։ Երկրաւոր բարիքը նորա սեփականութիւնը չէ, այլ մարմնոյ համար էր միայն ձեռք բերաւած և մարմնով վայելեց, բայց հոգեոր կատարելութիւնները հոգւոյ համար էին աշխատած, որոնցով պայծառանալով յաւիտենական կեսնքը մոռաւ։

Մի ցնորուած մարդու նման թափառումէի մինչեւ ցայժմ աշխարհիս երեսին, գերագոյն բանը հոգ ու փոշի դառնալու բաների մէջ էի պառաւմ, իսկ յաւիտենականն՝ անցաւորի մէջ լաւ հասկանումէի, որ ինձ խարումէր սերն ու բարեկամութիւնը, բաղտառութիւնն ու պատիւր, բայց էլի ստուերի նման բանի ետեւից էի ընկնում միշտ աւելի նոր, — մեծ եռանդով ու փափազով շատ չարչարուեցի, բայց երբէք ըոլորովին չհասայ, և եթէ որ հասած լինէի, գորանով արդեօք աւելի գոհի, աւելի բազզաւոր եղած կլինէի։ Դեռ էլի իմ հոգիս հեռացնելով յաւիտենական բանից, շատ երկար ժամանակ պիտի զոհեմ անցաւորին։ Ոչ ոչ իմ ստեղծող Աստուածս, ես պէտք է շտապեմ, վաղեմ այն աւելի լաւ բանին հասնելու, որ դու ինձ ցոյց ես տալիս։ Այս երկրաւոր կեսնքի թագաւորութիւնը չէ, որոյ մէջ պարունակվումէ իմ ընթացքիս սահմանն, այլ աստուածային բանի թագաւորութիւնն։ Սորա համար պէտք է խնդրեմ, պտում առաջ Աստուծոյ արքայութիւնն, որ Յիսուս աշխարհիս վերայ սորվեցրեց իւր քարոզներովն։

Քաջութեամբ պէտք է աւելի լաւ ճանապարհը բաց անեմ ինձ համար և երբ որ կտեսնեմ, որ իմ անհաստատ ուժերիս վերայ յօյս կատել չեմ կարող, երբ որ կտեսնեմ, որ երկրաւոր հրապոյրներ, իմ աւելի բարձր, աւելի վսեմ նպատակներս ուզումեն ինձ մնուացնել տալ, երբ որ զգայական բուռն ցանկութիւնից ինձ պիտի կորցնեմ և անսպիտան մոքերից պիտի տարուիմ — այդպիտի ժամանակ, ովք իմ փրկիչ, թող քո սուրբ կեսնքիդ մոփի տամ, որ սիրա առնում ու զօրանամ։ Այն ժամանակ թող հնչի իմ սրտիս խորքում Քո ձայնդ թէ՝ ով որ մինչեւ վերջը կհամբերի, նաև կապիրի։